

Աւելի ուշ, յիսնեակ տարի մը յետոյ, ա-
նոր ներքողը կը հիւսէ Երեմիա Չէլչպի²³,
հետեւեալ զգայուն տողերով.

Մինն ի սուրբսն ընարեալ Մովսէս երանեալ,
երջանիկ ցուցեալ.

Ի Տաթեւ տընկեալ, ի վանքն ուռճացեալ,
սրբութեամբ բուսեալ.

Բարուք կանաչեալ, վարուք սաղարթեալ,
հովանաւոր լեալ.

Սուրբ գործովք ծաղկեալ,
պտօքն քաղցրացեալ, հասուն կատարեալ,
Գոյնն գեղեցկացեալ, հոտով սիրացեալ,
համով սիրեցեալ:

Զրարի գործսն տեսեալ, մարդիկ զարմացեալ,
զՏէրն փառաւորեալ.

Գաւազան հասեալ, եպիսկոպոս լեալ,
յաշտանակ կանգնեալ.

Ընտրեալ եւ սրբեալ, պարգեալ եւ մաքրեալ,
յառաջ հրաւիրեալ.

Կոչեալ եւ ձայնեալ, ի գահն մեծարեալ,
կաթուղիկոս լեալ:

Լոյսն լուսաւորեալ, յարեւելս ծաղեալ,
յարեւմուտս սփռեալ.

Այնմ շառաւիղեալ, յաշխարհ տարածեալ,
այնմ շաւղօք յարգեալ.

Ազգ Հայոց բերկրեալ, պարծանօք լըցեալ,
եւ մըխիթարեալ.

²³ Հ. Ն. Ակինեան, Երեմիա Չէլչպի Բէօմիւր-
ճեան, կեանքն եւ զրական գործունէութիւնը: Վիեննա
1933, էջ 195—196: